ARMEN PETROSYAN. The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic. Journal of Indo-European Studies Monograph № 42. *Washington, Institute for the Study of Man, 2002. 236 p.*

АРМЕН ПЕТРОСЯН. Армянский эпос и мифология. Ереван, 2002, 240 с.

Այս գիրքը, տպված անգլերեն և ռուսերեն տարբերակներով, ինքնատիպ ամփոփումն է Արմեն Պետրոսյանի հայ և համեմատական առասպելաբանության և էպոսագիտության վերաբերյալ նախորդ աշխատանքների, միաժամանակ նոր մակարդակի մի ինքնուրույն հետազոտությունն է: Հայոց հին և միջնադարյան վեպերը «Վիպասանք», «Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ» և «Սասնա ծռեր», հայագիտության մեջ վաղուց են արժանացել բանագիտական և բանասիրական մակարդակով պատշաճ հետազոտությունների ու հրապարակումների: Բայց հեղինակը խնդրին մոտեցել է այլ ճանապարհով և հետազոտական այլ մեթոդներով: Նրա նպատակն է հայ վիպական ավանդության վաղնջագույն առասպելաբանական արմատների բացահայտումը, որն իրականացվել է հայագիտության մեջ աննախընթաց լայն ընդգրկումով ու խորությամբ:

Համեմատական քննությունների համար հեղինակի համար առաջին հերթին հիմք է ծառայել տեղադրական-աշխարհագրական գործոնը՝ այն միջավայրը, որին առնչվել և որի սահմաններում են կատարվել վիպական հերոսների արարքները: Այս համատեքստում էական է Հայկական լեռնաշխարհի հարավի և հարավ-արևմուտքի դերը, հատկապես՝ Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքների շրջանները, որոնք առասպելների կենտրոնացման կարևոր վայրեր են և հին մերձավորարևելյան, և հայկական ավանդույթներում: Այստեղ տեղայնացած հին միջագետքյան, ասորական և հայկական առասպելների համադրությունն է հեղինակին հնարավորություն տվել ձևակերպելու իր հայ-միջագետքյան, հայ-հնդեվրոպական և հնդեվրոպական-միջագետքյան կապերի վերաբերյալ դրույթները:

Աշխատությունը բաժանված է վեց գլուխների, որոնցից առաջին չորսում քննվում են հայոց հին ու նոր վեպերի կերպարների, սյուժեների և մոտիվների առասպելաբանական նախահիմքերը, որոնց համար հեղինակը հնդեվրոպական և հին մերձավորարևելյան զուգահեռներ է բերում: Վերջին երկու գլխում քննության են առնվում առասպելի և պատմության փոխհարաբերությունները, մասնավորապես վիպական կերպարների պատմական նախատիպերը և հայոց ազգածագման ու նախապատմության խնդիրները:

Համառոտակի անդրադառնանք աշխատության բովանդակությանը, ըստ առանձին գլուխների:

1. Հայ վիպական ավանդության ամենավաղնջական շերտը թերևս սրբազան երկվորյակների (նաև եռվորյակների) առասպելներն են, որոնցով, իբրև հիմնադիր նախնիների, սկզբնավորվում են հայոց բոլոր հին վեպերը: Հայոց երկվորյակային առասպելներում հեղինակն իրավամբ տեսնում է Հին աշխարհի երկու հիմնական հայեցակետերի անդրադարձումները՝ հնդեվրոպական և հինարևելյան, կապված համապատասխանաբար ձիուց և ցլից սերված հերոսների հետ: Այս հիմքի վրա բացահայտվում են մի շարք ընդհանրություններ հայկական Երվանդ-Երվազ, Սանասար-Բաղդասար, հնդկական Ինդրա-Ագնի, խուռական Թեշուբ-Թաշմիշու երկվորյակային զույգերի միջև, որոնցից առաջիններն ամպրոպային աստվածություններ են: Բացահայտվում է ամպրոպային աստծու առասպելների կարևորագույն դերը հայոց վեպերում, բերվում է հայոց Վահագն աստծու հիմնի հետ համադրելի մի շումերական բնագիր,

խոսվում է հայկական վեպի վրա հնարավոր միտանական ազդեցության, խեթական Պիրվա աստծու և նրա պաշտամունքի վայրերում տեղայնացած հայոց հերոսների ընդհանրությունների մասին և այլն:

2. Իր նախորդ ուսումնասիրություններում Ա.Պետրոսյանը վերականգնել էր «սևի և սպիտակի հակադրության առասպելը», մարմնավորված *rēmo- և *Harg՝- արմատներով, որի առավել բացահայտ օրինակը Պարաշուրամայի և Արջունայի հակադրությունն է հնդկական ավանդության մեջ: Գրքի երկրորդ գլուխը նվիրված է այս առասպելույթի հայկական դրսևորումների համեմատական քննությանը, հատկապես հայոց երկրորդ անվանագիր նախնի Արամի՝ *rēmo-ից ծագելու և Արամի ու Հայկի (առաջին նախնու) ամպրոպային աստվածություններ լինելու խնդիրներին: Սա համահունչ է տակավին մ.թ.ա. III հազարամյակից Հայկական լեռնաշխարհի հարավից և Հյուսիսային Միջագետքից ավանդված Ar(a)m- հիմքով ցեղատեղանուններին և հին սեմական տիեզերաբանական պատկերացումներում «մթության» երկրի ու լեռան տեղայնացմանն այդ շրջանում: Հայկը և Արամը դիտվում են որպես խուռաուրարտական Թեշուբ-Թեյշեբայի հայկական համապատասխանություններ: Վերջինս, որի անունը ստուգաբանվում է հնդեվրոպական *tek's- «կացին» արմատով, որպես «կացնավոր», նույնացվում է հունական առասպելաբանության Թեսևսին (հմմտ. Թեսևսի կապը լաբիրինթոսի հետ, կապված labrys «կրկնակի կացին» արմատին):

Քննելով Արծրունի իշխանական տան նախնու լեգենդը, որը պատմվել է Մեծ Զաբ գետի վերին հոսանքում, Ա. Պետրոսյանը հանգում է այն հետևության, որ այստեղ արծվի հիշատակությունը (հին հայ. արծուի *rg'ipiyo-, հմմտ. *Harg' «սպիտակ, փայլուն. արծաթ», «արագ») համապատասխանում է շումերական առասպելական Անզու թռչունի մի առասպելին, տեղայնացած Մեծ և Փոքր Զաբ գետերի ավազանում՝ Զաբու երկրում: Ընդ որում Անզուի ku.babbar «արծաթ» մակդիրն էլ համապատասխանում է արծվի հնդեվրոպական անվանն ու առասպելույթին (որի մի դրսևորումն էլ ի հայտ է գալիս Ռիգվեդայում), որը պետք է բացատրվի մ.թ.ա. IV հազարամյակից Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանները շումերական ազդեցության տակ գտնվելու հանգամանքով:

3. Երրորդ գլուխը վերաբերում է «մեռնող և հառնող» հերոսներին: Հայոց վեպերն ավարտվում են «վերջին» հերոսներով՝ «մեռնող» աստվածությունների վիպականացած կերպարներով: Նրանցից առաջինը՝ ազգածին ավանդության Արա Գեղեցիկը համադրվում է հնդեվրոպական համահունչ դիցանունների, հատկապես խեթ. Ara(s)-ին (ըստ Գ.Ղափանցյանի): Արա Գեղեցկի նախատիպ Արամանեակի անունը հանգեցվում է հնդեվրոպական *aryomen-ին (հմմտ. հնդ. Արյաման դիցանունը), բաղարկված Արամի հետ: Հետաքրքիր է աքադական Էա-Իշթար-Իրեմում և հայոց Հայկ-Աստղիկ-Արամանյակ դիցաբանական եռյակների համադրությունը, ապա և հայոց «մեռնող և հառնող» Արա Գեղեցկի և նրա զուգորդ պամփյուլացի Էրի կապը միջագետքյան Էրրա աստծու հետ: Առավել ուշագրավ է հայ վիպական հերոսների հակառակորդների կերպարների և անունների համեմատական քննությունը: Ի հայտ է գալիս *Hner- և *danu- արմատներով կոդավորվող երկու տոհմերի հակադրության առասպելը, ուր երկրորդի առաջնորդը հաճախ կոչվում է սեմական b'l դիցանվան հետ համադրելի անուններով՝ հայ. Բել, հուն. Բելոս, հնդ. Բալի:

4. Հեղինակն իրավամբ ղտնում է, որ հայկական բոլոր վիպաշարերը բնութագրվում են կերպարների մեկ միասնական համալիրով, ձևավորված որպես ծննդաբանական շարք: Այս շարքը դիտվում է որպես երկնային աստծու երկվորյակ որդիների և նրանցից մեկի՝ ամպրոպի աստծու ու նրա մեռնող որդու առասպելների համադրություն: Հայկական շարքերն առավել մոտ են Հռոմի առաջին արքաների շարքին, ընդ որում, և՝ անուններով, և՝ կերպարների գործառութային բաշխմամբ՝ ըստ Ժ. Դյումեզիլի «եռաֆունկցիոնալ գաղափարախոսության»:

Ուշագրավ են հայասական, ուրարտական և հայ նախաքրիստոնեական դիցա-

բանների աստվածների առնչությունների բացահայտումները: Այսպես. Հայկական լեռնաշխարհի հարավում կենտրոնացած ուրարտական դիցարանն իր եռամաս կառուցվածքով համադրելի է հնդեվրոպական եռամաս դիցարանների Ժ. Դյումեզիլի մեկնաբանության հետ, ընդ որում, մեծ աստվածների եռյակի գեթ երկուսի անունները հնդեվրոպական են (Թեյշեբա < *tek's-, ըստ հեղինակի և Շիվինի < խեթ. Šiu-ni «աստված, արևի աստված», ըստ Վ. Իվանովի և Ի. Դյակոնովի): Այս աստվածները պահպանվել են «Սասնա ծռեր» էպոսի հերոսների կերպարներում: Արևմուտքի Բարձր Հայք նահանգի, համահայկական պետական պաշտամունքի արժանացած աստվածները շարունակում են տեղի հնագույն թագավորության Հայասայի աստվածների կերպարները, որոնք իրանական դարաշրջանում վերանվանվել են իրանական անուններով: Հյուսիսի հին աստվածները պահպանվել են որպես հայոց ազգածին ավանդության հերոսներ:

5. Հիմնականում արաբական տիրապետության արդյունք հանդիսացող «Սասնա ծռերի» առաջին հերոսների ասորեստանյան դարաշրջանից եկող անունների հիման վրա այն արդարացի եզրակացությունն է արվում, որ այդ ճյուղի սեմական տարրերը հասնում են Ասորեստանի և Ուրարտուի հակադրության դարաշրջանը: Էպոսի հնագույն տարբերակի անուններն այդ տարածքների հնագույն ցեղերի էպոնիմներն են (Սանասարի որդի Մուշը և Արամի կուսակալ Մշակը մուշկերի էպոնիմներն են): «Սասնա ծռերի» գլխավոր հերոս Դավիթը, ըստ Մ. Աբեղյանի դասական ուսումնասիրության, հին տարբերակի Մուշեղն է, «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» վեպերի մեծ հերոսը: Այս անունը կապված է խեթական Մուրսիլի անվանը, և Ա.Պետրոսյանը համադրում է այս հերոսի առասպելությունը Էլդիայի առասպելական արքա Մյուրսիլոսի, ապա և Մուրսիլի անունը կրող խեթական պատմական արքաների ժամանակների իրողությունների հետ: Անկախ որոշ համադրությունների թեականությունից, այս վերակազմությունները նոր լույս են սփռում Դավթի կերպարի հին արմատների բացահայտման վրա: Նոր խոսք են հայագիտության մեջ: Գիտության մեջ նոր խոսք է նաև «Իլիականի» և Սասուն-Տարոն տարածաշրջանի վիպական ավանդության մեջ առկա անունների և մոտիվների ընդհանրությունների, ինչպես օրինակ Տրոյա և Տարոն անունների համադրությունը:

6. Քննության են առնվում հայոց և տարածաշրջանի այլ հին ժողովուրդների ազգածագման ու նախապատմության հարցերն ըստ հայ վիպաառասպելաբանական ավանդության տվյալների: Հայոց առաջին նախնի Հայկը և նրա ժառանգները, որոնց անուններով են կոչվել Հայաստանը, նրա լեռները, գետերը, իշխանական տոհմերը, ապա և ամիսների ու օրերի անունները, համարվում են հայոց հնագույն աստվածների վիպականացած կերպարներ: Այդ հերոսների շարքն ավարտվում է վերջին աստվածային նահապետ, «մեռնող և հառնող» աստվածություն Արա Գեղեցկի մահով: Ազգածին ավանդությունը ներկայացնում է «արարչագործության առասպելի» վիպականացած տարբերակը: Միևնույն առասպելաբանական մոդելն է կրկնօրինակվում հայ ավանդության հետագա վիպաշարերում:

Հայոց նախնի Արամի և նրա հաջորդ Մշակի և արամեացիների էպոնիմ Արամի ու նրա հաջորդ Մոսոքի անունների համեմատությամբ հիմնավորվում է նրանց միևնույն առասպելաբանական հիմքից ծագած լինելու տեսակետը: Արամ անունն ի հայտ է գալիս նաև քարթվելական և հյուսիսարևմտակովկասյան լեգենդներում, որ պետք է փոխառված լինի հայկականից:

Առաջադրվում և քննվում է հայոց ազգածագման չորս վարկած, որոնց համաձայն հայ ցեղանվան հիմք են համարվում շումերական աղբյուրներում պահպանված Հայաստանի հարավային շրջանների HA.A ցեղատեղանունը, խեթական աղբյուրների Hayaša թագավորության անվանումը, խեթերի ծագումով նախախեթական Hatti ցեղանունը և ուրարտական աղբյուրների Etiu (Etio) ցեղատեղանունը: Հայկի և նրա երեք որդիների առասպելները համադրվում են իրանական և գերմանական (ըստ Տակիտո-

սի) համապատասխան լեգենդներին, որի հետևանքով բացահայտվում են նաև անվանական զուգահեռներ: Այդ երեք որդիներից երկուսը հայերի՝ Արամանյակ և խուռիների՝ Խոռ էպոնիմներն են, իսկ երրորդը՝ Մանավազ, թերևս ուրարտացիների, բազարկված իրանական նմանահունչ մի անվան հետ: Ուրարտական դիցարանի և արքաների անունների քննության հիման վրա հավանական է համարվում Ուրարտուի իշխող տարրի հնաբալկանյան «թրակափռյուգական» ծագումը:

Մենագրության մեջ առաջ է բերվում հսկայաքանակ համեմատական նյութ հնդեվրոպական և հին մերձավորարևելյան ավանդություններից, որոնց հիման վրա հայկական առասպելները և վեպերը ներմուծվում են հնդեվրոպական և հին մերձավորարևելյան ուսումնասիրությունների ոլորտը: Գրքի հիմնական թերությունն այն է, որ հեղինակը, երբեմն չափազանց տարվելով համեմատաբանությամբ, ճիշտ գտնված եզրերն ու հիմնավորումները խճողում է ավելորդ երկրորդական, երրորդական փաստերով և հեռանում առանցքային խնդրից, որի հետևանքով առողջ միջուկը կորչում է համեմատական հսկա նյութի տակ: Այս կարգի թերությունները, հարկավ, թուլացնում են շարադրանքի տպավորությունը, սակայն բնավ չեն նսեմացնում աշխատության արժեքը: Կատարված է մեծ ու արդյունավետ հետազոտություն, ուր առաջին անգամ լայնքով ու խորությամբ միջազգային գիտության մեջ շրջանառության են դրվում հայ բազմադարյան վիպական ավանդության գրեթե բոլոր կարևոր հուշարձանները և դրանց անվանաբանական, սյուժետային, մոտիվային հիմնական փաստերը, քննության առնված համեմատական լայն տեսադաշտի վրա: Այդ քննություններից, որոշ վերապահումներով հանդերձ, հիմնականում պարզվել են մի շարք լեզվական, էթնիկական և մշակութային փոխառնչություններ, որոնք առկա են եղել Հայկական լեռնաշխարհի հարավում և Հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. III-I հազարամյակներում: Դրանով բացահայտվում է հայ վիպական ավանդության պատմամշակութային բացառիկ նշանակությունը հայերի և հնդեվրոպական ու մերձավորարևելյան հին ժողովուրդների հնագույն պատմության և մշակույթների ուսումնասիրության գործում:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ